Վերապատրաստող կազմակերպություն՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների

վերապատրաստման ծրագիր

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մեթոդը դասը ակտիվ ու արդյունավետ դարձնելու միջոց

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈւՍՈՒՑԻՉ՝ Աբով ԳարեգինիՍահակյան

ԴՊՐՈՑ՝ «Լիճքի միջն.դպրոց» ՊՈԱԿ

ՄԱՐՏՈՒՆԻ -2023

Բովանդակություն

1. Ներածություն........................................................................................................3

2. Գրական ակնարկ.........................................................................................9

3. Փորձարարական հետազոտություն...........................................................10

3.1. Խմբի նկարագիրը.......................................................................................11

3.2. Փորձարարական դասեր.............................................................................12

3.2.1. Փորձարարական դաս-1...........................................................................13

3.3.2. Փորձարարական դաս-2...........................................................................15

4. Վերլուծություն.................................................................................................16

5. Գրականության ցանկ.....................................................................................16

6. Հավելված.........................................................................................................17

1. Դասապլան-1.................................................................................................17

2. Դասապլան-2..................................................................................................18

# 1. Ներածություն

Մարդը իր մանկության հիմնական մասը անցկացնում է դպրոցում: Այս ժամանակահատվածը տարիքային զարգացման ամենաբարդ շրջանն է: Դպրոցը աշակերտի համար հասարակ կրթօջախ չէ, որտեղ նա ստանում է մի շարք գիտելիքներ տարբեր առարկաներից,դպրոցը մի վայր է, որտեղ երեխան յուրացնում է տարբեր սոցիալական դերեր, պատրաստում ինքն իրեն հասուն կյանքի: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի

ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը:

Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին:

Մանկավարժական հետազոտությունների փորձը ցույց է տալիս, որ հետազոտողները հաճախ բնութագրում են մանկավարժական գործունեության բովանդակությունը այն ձևերով, որոնց միջոցով դրանք իրականացվում են: Մենք կօգտվենք այս մեթոդից, քանի որ ձևն ու բովանդակությունը իրենցից ներկայացնում են անբաժանելի զույգ փիլիսոփայական կատեգորիաներ: Երիտասարդներին զինվորական ծառայության պատրաստելու մանկավարժական համակարգի կառուցվածքում կազմակերպչական ձևերը, որոնք անհրաժեշտ են բովանդակության իրականացման համար, միավորում է կազմակերպչական բաղադրիչը:

անկավարժ-հետազոտողների աշխատանքներում մանկավարժական

համակարգի նպատակները արտահայտված են բավական հստակ և կառուցողական, սակայն, հստակեցման տարբեր աստիճաններով: Այսպես, Ս.Պ. Պոլյակովը

, օրինակ, համակարգի նպատակը կապում է զինծառայության հիմունքների ուսուցման արդյունքի,

գիտելիքների, գործնական հմտությունների ու

կարողությունների, բարոյահոգեբանական և ֆիզիկական որակների հատկանիշների,

զինվորական ծառայության նկատմամբ դրական վերաբերմունքի,

հայրենասիրության, Հայրենիքի պաշտպանության հանդեպ պատասխանատվության հետ: Ա.Յու. Տանյուխինը

,անդրադառնալով ավագ դպրոցականների

կատեգորիային, հայրենասիրության և քաղաքացիության ձևավորման հետ տեսնում է նրանց զինվորական

ծառայությանը պատրաստելու նպատակը՝ «ընտրության դաշտի» ազատ առաջնորդման մեջ, որը

ներկայացնում է ռազմամասնագիտական ծառայությունը անձնային և մասնագիտական ինքնորոշման

համար: Մ.Ա. Կիրպիչևը իր հերթին, որպես նպատակ առանձնացնում է հասարակության կյանքի

ցանկացած ոլորտում, այդ թվում և Զինված ուժերի շարքերում պաշտպանության գործառույթի իրականացմանը

զորակոչիկի ունակությունը:

Իսկ հետազոտողների մեծամասնությունը, ովքեր աշխատում են այս խնդրի վրա, գործառնում են

«նախապատրաստում» և «պատրաստություն» հասկացություններով: Ամենաընդհանուր իմաստով,

նախապատրաստումն ընկալվում է որպես «... դրվածքների, գիտելիքների ու կարողությունների ձևավորում

և հարստացում, որոնք անհրաժեշտ են անհատին հատուկ առաջադրանքների համարժեք կատարման համար»:

Նախապատրաստման արդյունքները, որպես կանոն, մեկնաբանվում են

«պատրաստություն» հասկացության միջոցով, որը մանկավարժության մեջ կրում է ներգրավող բնույթ, որը

միավորում է ֆիզիոլոգիական, հոգեբանական, ճանաչողական և այլ կողմեր:

Զինվորական ծառայությանը

քաղաքացիների պատրաստությանը նրանց աշխատանքներում հանդես է գալիս
որպես հանրակրթական հաստատությունների, սոցիալական կառուցվածքների և հենց քաղաքացիների
փոխազդեցության արդյունք զինվորական գործունեությանը

պատրաստման առնչությամբ, որն ապահովվում է աշխարհայացքային և մոտիվացիոն բնութագրերի զարգացմամբ ու ձևավորմամբ, որոնք ուղղված են ռազմական մասնագիտության որակական տիրապետմանը և ծառայողական պարտքի արդյունավետ կատարմանը:

Օգտագործելով սույն մոտեցումը, մենք սահմանել ենք երիտասարդներին զինվորական ծառայությանը պատրաստելու մանկավարժական համակարգի նպատակը որպես երիտասարդների այնպիսի կատեգորիայի ձևավորում, ովքեր ունեն ֆիզիկական, հոգեբանական և մտավոր պատրաստություն զինվորական ծառայության պարտականությունների կատարմանը, քաղաքացու և հայրենասերի որակներ, որոնք բնութագրվում են զինվորական ծառայությանը ուղղվածությամբ և դրա նկատմամբ դրական վերաբերմունքով:

Երիտասարդներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու մանակավարժական համակարգի նորմատիվ բաղադրիչը ստեղծվում է նորմատիվ և ծրագրային փաստաթղթերով, որոնք սահմանում են իրավական դաշտի սահմանները, որոնցում ձևավորում և գործում է երիտասարդներին զինվորական ծառայությանը պատրաստելու, ինչպես նաև դրա ձևավորման ու զարգացման հիմնական ուղղությունները որոշող համակարգը: Այս բաղադրիչն առանձնացնելու անհրաժեշտությունը կապված է նրա հետ, որ ցանկացած ելք իրավական դաշտի սահմաններից ձևավորում է մանկավարժակա համակարգերում անլուծելի հակասություն, իսկ երբեմն էլ ոչնչացնում է դրանք:

Նախևառաջ, նորմատիվային բաղադրիչին դասենք ակտերը, որոնք սահմանում են համակարգի գոյության բուն անհրաժեշտությունն ու հնարավորությունը: Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է:

Հնարավորությունը, իսկ մի շարք դեպքերում նաև քաղաքացիների մասնակցության պարտականությունը քաղաքացիներին զինվորական ծառայության պատրաստելու մանկավարժական համակարգի մեջ նախատեսված է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի հոդվածներով:

Սահմանված է, որ երիտասարդները, ովքեր ունեն ֆիզիկական որակների զարգացման ցածր մակարդակ և իրենց պահուստում չունեն հիմնական զինվորական-կիրառական ուղղվածություն, պակաս արդյունավետությամբ են կատարում իրենց առջև դրված խնդիրները, հատկապես զինծառայության առաջին ամիսներին:

Ներկայումս հանրակրթական դպրոցների ավագ դասարաններում ֆիզիկական որակների և ռազմակիրառական տեսակի մարզաձևերի դաստիարակության հարցերը լուծվում են առանձին-առանձին: Ֆիզկուլտուրայի ուսուցիչը տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով որպես կանոն չի զբաղվում ավագ դասարաններում սովորողների մոտ ռազմակիրառական կարողությունների ու հմտությունների ձևավորման հարցերով: Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ նախազորակոչիկը ունի ֆիզիկական որակների զարգացման անհրաժեշտ մակարդակ, բայց չի կարող ռացիոնալ ու խնայողաբար ծախսել դրանք:

Տիրապետում է ստանդարտ պայմաններում հնարքների տեխնիկային (այդ թվում և ուսումնական պարապմունքների շրջանակներում վերահսկողությանը), բայց չի կարող այն օպտիմալ կիրառել տարբեր (ավելի բարդ) իրավիճակներում: Հայոց բանակի մարտունակությանը ապահովող հիմնական գործոնն է հայրենասիրության

զարգացումն է: Նախազորակոչային տարիքի երիդասարդների ՀՀԶՈՒ-ում ծառայելու նախապատրաստումը իր մեջ ներառում է հայրենիքի սահմանների

պաշտպանության անհրաժեշտության բարձրացումը:Ազգ բանակ ստեղծվելուց մարտերում և իր գործունեության առաջին իսկ օրվանից անբասիր կերպով ծառայում է հայրենիքին,արժանի կերպով կատարում է իր վրա դրված պարտքը ու խնդիրները:Յուրաքանչյուր քաղաքացու համար սրպազան պարտքն է ծառայել

ԶՈՒ-ում տարածաշրջանի արդի ռազմաքաղաքական բարձր վիճակը պահպանում էին իրական վտանգ,այդ պատճառով ՀՀԶՈՒ-ին պահանջվում էբարձր մարտունակություն ևզգոնություն, բարձր կամք,բարձր հատկություններ:ՀՀ կառավարությունը ուշադրության կենտրոնում է պահում ԶՈՒ ռազմատեխնիկական ապահովվածությունը և նյութամատակարարման խնդիրները: Առկա սոցիալ – տնտեսական սուղ պայմաններում կատարվում է բանակի զինավորում և վերա- զինավորում:Այս բոլորը պատրաստվում է նվիրվածությամբ ծառայել

հայրենիքին,անձեռնմխելի պահել հայրենիքի սահմանները, մշտապես պատրաստ լինել հակահարված տալ հակառակորդին: Զինղեկը պարտավոր է

ռազմահայրենասիրական դաստիարակություն,ռազմական պատրաստություն,քաղ պաշտպանություն հարցերում սովորեցնել, օգնել և դաստիրակել աշակերտներին, պատրաստել ապագա զինվոր դառնալու՝ ՆԶՊ գործող ծրագրերին ու չափորոշիչ ավելի մեծ պահանջներ է առաջադրում զինղեկներին: Բոլոր դասաժամերը պետք է հագեցված լինի և ուղղված լինեն երիդասարդական գաղափարական, քաղաքական, բարոյական դաստիարակության ուղղությամբ: Այս աշխատանքի հաջողությունը կախված է զինղեկի մանկավարժական հմտություններից : Զինղեկի պատրաստակամությունն է գիտենալ աշակերտների, զինծառայողների նախապատրաստական ձևերն ու մեթոդները: Զինղեկը պարտավոր է նախապատրաստել ուսումնական նորմատիվների կատարմանը կրակելուն, նռնակ

նետելուն, ուսումնասիրել զինվորական գործի հիմունքները: Այս բոլորն ավելի մեծ պահանջներ են ներկայացնում ապագա զինվորների, ֆիզիկական և ռազմական գործի իմացությունը պահանջում է արագ կողմնորոշմանհմտությունը: Մարտական մեքենաների, տանկերի, ինքնաթիռների, համալիրների կառավարման համար անհրաժեշտ են բանիմաց զինվորներ՝

ՆԶՊ-ի խնդիրներն են՝

- ապահովել սովորողների կողմնորոշվել ՆԶՊ առարկայի պետական
- ուսումնական ծրագրերի յուրացում
- սովորողներին պարզաբանել ՀՀ ԶՈՒ խնդիրները, առանձնահատկությունները և
- նշանակությունը
- սովորողների մեջ դաստիրակաել ազգային բանակում ծառայելու
- անհրաժեշտության զարգացումը
- կազմակերպել զինվորական երդման,համազորակոչային կանոնների
- պահանջների ուսումնասիրում և դաստիրակել դրանք անվերապահորեն
- կատարելու պատրաստակամությունը
- պատանիներին ծանոթացնել զինվորական անձանց կյանքին և կենցաղին,
- զենքին ու տեխնիկային
- տեսական և գործնական պարապմունքների միջոցով իրականացնել
- սովորողների շարային և հրաձգության պարապմունքները, սովորողներին զինել
- անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով ապահովել
- մարտունակությունը և քաղ. Պաշտպանություն հիմնահարցերի հիմունքների
- յուրացումը
- սովորողների մոտ ձևավորել ռազմկիրառական
- կարողությունները,հմտերեն կազմակերպել բարձր հատկություններ բուժօգնություն,
- փոխօգնություն ցուցաբերելու ունակություններ
- դաստիրակել հայոց բանակի պատմական ավանդույթներին, ֆիզիկապես և

- բարոյապես կայուն առողջ, դիմացկուն բազմակողմանի զարգացած հայրենիքի պաշտպաններ պատրաստել:

## 2.Գրական ակնարկ

Ուսուցիչ լինելը,ինչ խոսք,հաճելի և միևնույն ժամանակ պարտավորեցնող է:Բանակում,իհարկե հույսը չի դրվում դպրոցում ստացած ռազմական գիտելիքների վրա,սակայն,երբ զորակոչիկը բանակ է գնում պատրաստակամ,հայրենասիրությամբ լցված,ապա դա միանշանակ դպրոցի ջանքերի մասին է խոսում:

Ռազմաճակատ մեկնողների կամք, հայրենասիրություն ու նպատակասլացություն ունենալը պարտադիր, բայց ոչ բավարար պայմաններ են պատերազմում հաղթելու համար:Սակայն զինվորի բարոյական ոգին ի զորու կլինի հրաշքներ գործել միայն զենք բռնել սովորելուց հետո:Իմ կարծիքով յուրաքանչյուր տղամարդ պետք է կարողանա զենք բռնել,զենքին տիրապետել:Դե իսկ դպրոցում աշակերտները քաջ գիտակցում են,որ զենքին պարտավոր են տիրապետել,որովհետև ունեն վեհ նպատակ՝ ծառայել հայրենիքին,իսկ ինձ համար ամենաուրախալին այն է,որ նրանք սպասում են դրան անհամբեր:Ու առավել հաճելի է,երբ գիտակցում եմ,որ այս հարցում ես էլ ունեմ իմ ներդրումը: Ու մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի մեկ պարզ ճշմարտություն. մենք ենք մեր հայրենիքի սրի ու վահանի կենդանի մարմնացումը, մենք ենք մեր երկրի այսօրվա պաշտպանը, մենք ենք գալիք սերունդների համար պայծառ ապագա կերտողը:

Արդյունավետ ուսուցման կարևոր նախապայմանն է դասին հանգամա¬նալից նախապատրաստվելը: Սա ենթադրում է, որ ուս Առաջարկում ենք հարցեր, որոնց շուրջ դասից առաջ մտածելով ուսուցիչը կարող է ավելի հստակ գնահատել, թե որքանով է ինքը դասին պատրաստ: Դասից առաջ ուսուցիչը պետք է խորհի. Որքա՞ն են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:

- Ինչպե°ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են իմ կողմից ընտրված մեթոդականվարժությունըկատարելու:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը:
- Իրատեսակա՞ն էարդյոք այդ դասի ընթացքի պլանավորումը ըստ ժամանակի:

- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների ձեռք բերումները, ինչ չափանիշներով:

Դասին նախապատրաստվելու կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի կահավորումը՝ տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին համապատասխան:

Ուսուցիչը պետք է դասավորի նյութերը «համապատասխանեցնի կահավորանքը և համոզվի՞ արդյոք օգտագործվելիք տեխնիկական միջոցները սարքին են, եթե փորձ է կատարելու հարկ է, որ նախապեսմեկ անգամ ևս այն նախապես կատարի: Սա ուսուցչին լրացուցիչ վստահություն է ներշնչում, օգնում էդասի հաջող ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը:

Բուն դասը: Սա բուն դասապրոցեսն է, որի ընթացքի արդյունավետ կազմակերպումը ուսուցչից որոշակի ջանք, եռանդ և մանկավարժական գիտելիքներ ու տաղանդ է ենթադրում: Դասի ընթացքը կարելի էբաժանել երեք մասերի՝ ակտիվացման, կամ խթանման,նոր գիտելիքների ձեռքբերման և ձեռք բերած գիտելիքի ամրապնդման փուլեր /ԽԻԿ/:

## 3.Փորձարարական հետազոտություն

Շարային պատրաստությունը մարտական պատրաստության կարևոր առարկաներից մեկն է, որը կազմակերպվում է և անցկացվում է ՀՀ զինված ուժերի շարային կանոնադրության դրույթներին ու կանոններին համապատասխան:

Այն կոփում է զինվորին, նրա մեջ դաստիարակում դիտողականություն, ուշադրություն, կատարողականություն և կոլեկտիվիզմ:

Տարային պատրաստության պարապմունքները նպատակահարմար է անցկացնել հետևյալ հաջորդականությամբ՝

- նախորդ պարապմունքի ժամանակ անցած նյութի վարժաձևերի կրկնություն և ամրապնդում,
- նոր նյութի վարժաձևերի ցուցադրում մաս առ մաս և ամբողջությամբ
- սովորողների միջոցով նույն վարժության գործողությունների կրկնողություն
- ամփոփում

Քանի որ իմ հետազոտությունը անցկացնելու համար ընտրել եմ «Տարային պատրաստություն» թեման, ուստի դասը արդյունավետ անցկացնելու նպատակով որպես նախորդ դասի նյութը կրկնելու մեթոդ ընտրել եմ հարցադրումների մեփոդը, իսկ նոր դասի մատուցման համար՝

վարժությունների մեթոդը:

Այս մեթոդի էությունն այն է, որ նյութը ցարադրելուց ,քննարկելուց հետո, թեմայի արդյունավետ յուրացման համար կիրառել նյութի ամրապնդում վարժությունների միջոցով:

## 3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Լիճքի միջնակարգ միջնակարգ դպրոցիի 9-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 17 աշակերտ՝, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Ռազմագիտություն անցնում են շաբաթական 1 ժամ:

Ընտրված թեմաների ուսուցման համար կիրառել եմ վարժությունների մեթոդը՝ գործնական պարապմունքների անցկացման համար և հարցադրումների մեթոդը՝ գիտելիքների ամրապնդման համար և մտազրոհ նախոր դասի գիտելիքների ամրապնդման համար:

## 3.2. Փորձարարական դասեր

Փորձարարական դասն ունի մեթոդական նպատակ, որում արտացոլվում է այն, ինչն ուսուցիչը ցանկանում է ցույց տալ այցելուներին: Մեթոդական նպատակների ձևակերպումը բազմազան է: Օրինակ՝ «Ծանոթացնել ուսուցիչներին սովորողների մեջ ուսումնական առաջադրանքների կատարման հմտության զարգացման մեթոդիկային» կամ «Դասալսողներին ներկայացնել խմբային ուսումնական գործունեության մեթոդիկան» և այլն:

Փորձարարական դասերի նախապատրաստմանն ու անցկացմանը ներկայացվում են մի շարք պահանջներ:

Նորույթը կարող է վերաբերել ինչպես ուսումնական նյութի բովանդակությանը,
այնպես էլ նրա ուսումնասիրման մեթոդիկային: Դասը կարող է իր մեջ պարունակել նոր, հատուկ կառուցվածք: Աշխատակիցների դիտարկմանն առաջարկված նյութը կարող է նորույթ լինել գիտության, տարածաշրջանի և դպրոցի համար: Ամեն դեպքում փորձարարական դասը դասալսողների համար պետք է լինի նորի բացահայտում: Հակառակ դեպքում, անիմաստ է ներկա գտնվել աշխատակցի այն փորձարարական դասին, որից նոր բան չի կարելի քաղել:

Փորձարարական դասը արտացոլում է այն մեթոդական խնդիրների լուծումը,որի վրա աշխատել է ուսուցիչը: Նրա անհատական խնդիրը պետք է կապված լինի դպրոցի ընդհանուր մեթոդական խնդրի հետ: Դա մեթոդական աշխատանքի կազմակերպման նկատմամբ համակարգված մոտեցման իրականացման ցուցանիշն է:

Փորձարարական դասը պետք է ցույց տա (ապացուցի) նորարարության
առավելությունը (բարձր արդյունավետությունը): Ուսուցիչը, որը բաց դաս է վարում, ընտրում է այնպիսի թեմա, որի բովանդակությունը թույլ է տալիս այդ անել կամ ընձեռում է այդպիսի հնարավորություն:
Օրինակ՝ փորձարարական դասի

մերողական նպատակն է՝ «Տեսական (ընդհանրացնող) գիտելիքների ուսուցման կազմակերպման մեթոդիկան»: Ուսուցիչը ընտրում է այնպիսի թեմա, որը պարունակում է տեսական նյութ: Փորձարարական դասի անցկացման ժամանակ պահպանվում են ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող բոլոր պահանջները: Դասը պետք է անցկացնել սովորական պայմաններում, ընդունված տևողությամբ և այլն: Փորձարարական դասերի համար հատուկ պայմաններ ստեղծելը առաջին հերթին խախտում է ուսումնադաստիարակչական աշխատանքի կայունացած օրակարգը, երկրորդ հերթին, իդեալականացված պայմաններում նորույթը կորցնում է իր հետաքրքրությունը:

## 3.2.1.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր ՝ «Շարային կեցվածք: Հրամանների կատարումը:»

Դասի նպատակն էր ՝ Սովորողների հետ ուսումնասիրել «Շարային կեցվածք» հասկացության էությունը և նշանակությունը, հրամանների կատարման եղանակները:

Գիտենա՛լ, ի՞նչ է շարային կանոնադրությունը, ե՞րբ է հաստատվել

Գիտենա՛լ, շարքի տեսակները, բաղկացուցիչ տարրերը, զինվորի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում: Հրամանների ճիշտ արձակման կարգը:

Սովորողներին ծանոթացնե՛լ, շարային քայլի պահանջներին, սովորեցնել տեղում դարձումներ կատարելու մանրամսները, ծանոթացնե՛լ, շարժման ժամանակ դարձումներ կատարելու հնարքներին:

Դասը վարեցի մի քանի մեթոդների կիրառմամբ :

Պատմելով «Շարային կեցվածք» հասկացության էությունը և նշանակությունը, հրամանների կատարման եղանակները՝ զրույցի մեթոդով , այնուհետև դիմելով վարժությունների կատարման մեթոդին

ցույց տվեցի ոտնաթաթերի, ձեռքերի, մարմնի դիրքը շարային կեցվածք ընդունելիս:

Ապա ցուցադրեցի «հավասար», «ազատ» հրամանները: Ապա բացատրեցի, թե երբ են շարային կեցվածք ընդունում առանց հրամանի:

Ապա նույն վարժությունները կատարում են սովորողները անհատապես և զույգերով:

Այնուհետև գիտելիքների ամրապնդման նպատակով դիմեցին հարցադրման մեթոդին և սովորողները պատասխանեցին առաջադրված հարցերին:

Կատարեցինք գնահատում ևս մեկ անգամ անդրադարձ կատարեցին դասին և ամփոփեցինք դասը:

## 3.3.2. Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր ՝ Դարձումներ շարժման ժամանակ: Դասի նպատակն էր

- Սովորեցնե՛լ. ճշտորեն կատարել դարձումներ շարժման ժամանակ:
- Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ:
- Զինվորական ողջույն տեղում և շարժման ժամանակ:
- Սովորեցնե՛լ, զենքը կրելու ձևերը
- Շարային վարժաջևերը տեղում և շարժման ժամանակ,.Զինվորական ողջյոընի կատարումը զենքով:
- Սովորեցնե՛լ. ճշտորեն կատարել դարձումներ շարժման ժամանակ:
- Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ:
- Զինվորական ողջյուն տեղում և շարժման ծամանակ:

Դասը սկսեցինք նախորդ դասի գիտելիքների ամրապնդմամբ՝ մտագրոհ «Շարային կեցվածք» արտահայտությամբ:

Ապա կարճ դասախոսության մեթոդոն ներկայացրեցի նոր նյութը:

Այնուհետև դիմեցինք վարժությունների կատարման մեթոդի օգնությանը՝ մանրամասն ցույց

տալով առաջադրանքը:

Հաջորդ փայլում մարզեցինք սովորողներին անհատապես և զույգերով:

Դասի գիտելիքները ամրապնդելու նպատակով հարցադումների մեթոդով ամփոփեցինք դասը: Սովորողները ակտիվորեն պատասխանեցին առաջադրված հարցերին:

Վերջում կատարեցի գնահատում , ապա անդրադարձ կատարեցինք դասին , վերլուծեցինք աշակերտների հետ միասին :

## 4.Վերլուծություն

Հետազոտական նպատակով 9-րդ դասարանում անցկացրեցինք երկու դաս «Ռազմագիտություն » առարկայից։ Հետազոտության նպատակն էր պարզել մեթոդների կիրառմամբ ինչպես կփոխվի դասի արդյունավետությունը ։ Կիրառեցինք մտագրոհը, հարցադրումների մեթոդը, զրույցի մեթոդը, կարճ դասախոսության մեթոդը և գործնական պարապմունքների արդյունավետության բարձրացման նպատակով կիրառեցի վարժությունների կատարման մեթոդը։

Երկու դասերն էլ արդյունավետ էին, աշակերտները ակտիվորեն մասնակցեցին դասին, հետաքրքրությամբ կատարեցին վարժությունները։ Անդրադարձի ժամանակ աշակերտներտ հայտնեցին իրենց գոհունակությունը նորովի պարապմունքներից։ Երկու դասին էլ վերջնարդյունքին հասանք։ Մեթոդների կիրառությունը ճիշտ է։

## 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Վ. Օհանյան,Լ. Ղազարյան և ուրիշներ, ՆԶՊ 9, 10, 11-րդ դասարանի դասագրքեր, Երևան 2010 թ.

2. Ս. Մանուկյան, Գ. Ճաղարյան, Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, Երևան 2017թ.

3. Մեր հաղթանակները, հատոր Դ, Երևան 2012 թ.

4. Հ. Գ. Ժամկոչյան և ուրիշներ, Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև 18-րդ դարի վերջ։

# 6. ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Արով Սահակյան

| Առարկա՝ | ՆԶՊ | Ամսաթիվ | | Կիսամյակ | 1 | Դասարան | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թեմա՝ | Շարային կեցվածք: Հրամանների կատարումը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, ցուցապաստառներ: | | | | | | |
| Դասի նպատակը | Սովորողների հետ ուսումնասիրել «Շարային կեցվածք» հասկացության էությունը և նշանակությունը, հրամանների կատարման եղանակները:<br>Գիտենա՛լ, ի՞նչ է շարային կանոնադրությունը, ե՞րբ է հաստատվել Գիտենա՛լ,<br>շարքի տեսակները, բաղկացուցիչ տարրերը, զինվորի<br>պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում: Հրամանների ճիշտ արձակման կարգը:<br>Սովորողներին ծանոթացնե՛լ, շարային քայլի պահանջներին, սովորեցնել տեղում դարձումներ կատարելու մանրամասները, ծանոթացնե՛լ, շարժման ժամանակ<br>դարձումներ կատարելու հնարքներին: | | | | | | |

| Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | |
|---|---|
| Վերջն արդյունքները | Աշակերտը կկարողանա<br>ընդունել շարային կեցվածք, շարային քայլ, դարձումներ տեղում<br>շարային վարժաձևերի կատարման արագությունը մոտեցնել կանոնադրական պահանջներին, կատարել դարձումներ շարժման ժամանակ:<br>շարային քայլի հնարքները, անսխալ կատարել դարձումներ տեղում, ամուր նախադրյալներ ստեղծել շարժման ժամանակ դարձումների հետագա կա տարելագործման համար |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Ուսումնական գործունեություն<br><br>Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդ(ներ) |
|---|---|---|---|---|
| 1-5ր<br><br>2. 15ր | 1.Պատրաստվում են դասին: | 1. Հաշվառում է կատարում Ներկայացնում է դասի խնդիրը:<br><br>2. Զրույցի մեթոդով | Ինչ է շարային կեցվածքը և ինչ նշանակություն ունի զինվորի կյանքում: | Զրույցի մեթոդ<br>Վարժություններ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3-15ր<br><br>4. 10ր | 2Ուշադիր լսում և հետևում են զինղեկին:<br><br>3Կատարում են վարժությունները զինղեկի հրամանով:<br>4,Պատասխանում են հարցերին: | ներկայացնում ե նոր թեման և վարժությունների մեթոդով ցուց է տալիս շարային կեցվածքը, բացատրում«Զգաստ» , «Շարվիր» հրամանները, ցուց տալիս ոտնաթաթերի, ձեռքերի, մարմնի դիրքը շարային կեցվածք ընդունելիս:<br>Ապա ցուցադրում «հավսար», «ազատ» հրամանները: Ապա բացատրում,թե երբ են շարային կեցվածք ընդունում առանց հրամանի:<br>3 Մարզում է սովորողներին անհատապես և զույգերով:<br>4. Հարցադրումների մեթոդով ամփոփում էդասը:<br>Կատարում անդրադարձ, պատասխանում հարցերին: | Շարային կեցվածքի ժամանակ մարմնի, կրծքի, ձեռքերի դիրքը...<br>Ի՞նչ հրամաններով է զինվորը շարային կեցվածք ընդունում: Ո՞ր դեպքերում են շարային կեցվածք ընդունում առանց հրամանի:<br>Շարվելուց հետո ի՞նչ հրամաններ են տրվում շարքի հավասարեցման համար և ինչպե՞ս են կատարվում այդ հրամանները: | ի մեթոդ:<br><br>Հարցադրումներ ի մեթոդ: |
| Տնային աշխատանք | Տնային առաջադրանքի հանձնարարում: | | | |

Փոխտնօրեն՝ ____________________________

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Արով Սահակյան

| Առարկա՝ | ՆԶՊ | Ամսաթիվ | | Կիսամյակ | 1 | Դասարան | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թեմա՝ | Դարձումներ շարժման ժամանակ | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, ցուցապաստառներ, ավտոմատի մակետ: | | | | | | |

| | |
|---|---|
| Դասի նպատակը | Սովորեցնե՛լ. ճշտորեն կատարել դարձումներ շարժման ժամանակ: Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ:<br>Զինվորական ողջույն տեղում և շարժման ժամանակ:<br>Սովորեցնե՛լ, զենքը կրելու ձևերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Շարային վարժաչները տեղում և շարժման ժամանակ,.Զինվորական ողջյունի կատարումը գենքով:<br>Սովորեցնե՛լ. ճշտորեն կատարել դարձումներ շարժման ժամանակ: Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ:<br>Զինվորական ողջյուն տեղում և շարժման ծամանակ: | | | |
| Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | |
| Վերջնարդյունքները | Աշակերտը կկարողանա<br><br>● կատարել շարային քայլով շարժում՝ դարձումներ տեղում և շարժման ժամանակ շարքից դուրս գալ և շարք վերադառնալ, զինվորական ողջյուն տեղում և շարժման ժամանակ:<br>● վարժաձևերի կատարման ժամանակ հրամաններ ճիշտ արձակել:<br>● հրամաններ արձակել կանոնադրական պահանջներին համապատասխան | | | |
| Գործողություններ ( ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Ուսումնական գործունեություն<br><br>Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդ(ներ) |
| 1-5ր<br><br><br><br>2-10ր<br><br><br><br>3-10ր<br><br><br><br><br><br><br>4-15ր | 1.Պատրաստվում են դասին:<br><br><br>2. Մասնակցու են մտագրոհին և քննարկմանը:<br><br><br>3Ուշադիր դիտում են զինղեկի ցուցադրումները:<br><br><br><br><br>4Կատարում են վարժությունները զինղեկի հրամանով:<br>,Պատասխանում են հարցերին: | 1.Հաշվառում է կատարում Ներկայացնում է դասի խնդիրը:<br><br>2 Անդրադարձ նախորդ դասի վարժություններ ին՞ կատարում քննարկում:<br>Կարճ դասախոսության մեթոդով ներկայացնում է նոր նյութը:<br>3<br>Վարժություններ ի կատարման մեթոդով մանրամասն ցուց է տալիս առաջադրանքը:<br>4Մարզում է սովորողներին անհատապես և զույգերով: | Ինչպե՞ս շարքից դուրս գալ և շարք վերադառնալ:<br>Ինչպե՞ս է կատարվում զինվորական ողջյուն տեղում և շարժման ժամանակ:<br>Ինչպե՞ս կատարել շարային քայլով շարժում՝ դարձումներ տեղում և շարժման ժամանակ:<br>Ինչպես կատարել զինվորական ողջույն գենքով: | Մտագրոհ «Շարային կեցվածք» արտահայտությամբ :<br><br><br>Կարճ դասախոսության մեթոդ:<br>Վարժությունների կատարման մեթոդ:<br><br>Հարցադրումների մեթոդ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5-10ր | 5 Պատասխանում հարցերին: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5Հարցադումներ ի մեթոդով ամփոփում է դասը: Կատարում անդրադարձ, պատասխանում հարցերին | | |
| Տնային աշխատանք | Տնային առաջադրանքի հանձնարարում: | | | |

Փոխտնօրեն՝ ________________________________